# ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

31.10.2018

Հոկտեմբերի 30-ին Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը մարզպետարանում քաղաքացիների առաջին ընդունելությունը կատարեց. դրան մասնակցեց 43 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով  դիմելէր երեսունմեկ, աշխատանքի տեղավորման միջնորդության համար՝ ինը,  տանիքի վերանորոգման՝ երկու, գյուղը ոռոգման ջրով ապահովելու խնդրանքով՝ մեկքաղաքացի:
Դրամական օգնության բոլոր դիմումներին  դրական լուծում է տրվել:
Աշխատանքի տեղավորման մասին դիմումները հաշվառվել են եւ ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:
Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են տանիքների վերանորոգման եւ գյուղի ոռոգման  ջրի հետ կապված խնդիրների  մասին դիմումները: